



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

### à ð à Թ à ô Ø

6 մայիսի 2010 թվականի N 565 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 11-Ի N 238-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ղ ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» N 238-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 16-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ՝ վճարովի)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած և ըստ բուհերի ու մասնագիտությունների՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաստատած տեղերի (ընդունված արական սեռի ներկայացուցիչները չեն օգտվում «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված արտոնությունից)»:

2) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա անվճար և վճարովի ուսուցմամբ մրցույթների արդյունքները հաստատելու, արտոնություն ունեցող դիմորդների ցուցակներն ըստ մասնագիտությունների հաստատելու, անվճար և վճարովի»:

րովի ուսուցման համակարգում թափուր և պահուստային տեղերը վերաբաշխելու նպատակով ստեղծվում է հանրապետական ընդունող հանձնաժողով».

3) 35-րդ կետի`

ա. 1-ին ենթակետում «նախորդ տարվա շրջանավարտն այն չի ներկայացնում» բառերը փոխարինել «նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ` ատեստատ կամ դիպլոմ» բառերով,

բ. 6-րդ ենթակետում «106-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով» բառերը փոխարինել «105-րդ և 106-րդ կետերով» բառերով.

4) 41-րդ կետից հանել «ինչպես նաև ժամկետային զինվորական ծառայությունից առանց տարկետման իրավունքի ուսուցման վճարովի (վճարովի հայտերի նույն հերթականությամբ)» բառերը.

5) 50-րդ կետը «310112 - Ապահովագրական գործ (ագրոպարենային համակարգի)» բառերից հետո լրացնել «310110 - Ագրարային քաղաքականություն և տարածաշրջանի զարգացում», «311101 - Ագրոպարենային արտադրության էկոնոմիկա և կառավարում» բառերով.

6) ուժը կորցրած ճանաչել 94-րդ կետը.

7) 112-րդ կետի`

ա. 1-ին ենթակետից հանել «և վճարովի` առանց տարկետման իրավունքի» բառերը,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) վերաբաշխվում են մրցույթի արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած տեղերը, ինչպես նաև` անվճար, վճարովի համակարգի պահուստային տեղերը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. մայիսի 19  
Երևան

